

# Բրեմենյան երաժիշտներ



Exported from Wikisource on 07/30/20

# Բրենենյան երաժիշտներ

## Գրիմ եղբայրներ

Մարդու մեկը մի էշ է ունենում: Տարիներ շարունակ էս էշը լիքը պարկեր է կրում ջրաղաց, էնտեղից էլ տուն, բայց մի օր էլ պառավում է ու չի կարողանում աշխատել:

Տերը մտածում է, որ անտեղի է կերակրում նրան, և էշը, երբ նկատում է, որ վատ են իր գործերը, վեր է կենում ու փախչում տիրոջ մոտից, որ Բրենեն գնա: Մտածում է, թե էնտեղ կհաջողվի թափառաշրջիկ երաժիշտ դառնալ: Մի քիչ որ գնում է, ճանապարհին մի որսորդական շուն է հանդիպում: Լեզուն կախ գցած շունը ընկած է լինում գետնին, երևի շատ վազելուց հոգնած է լինում: -Ինչո՞ւ ես էդպես ծանր շնչում, քեռի Քուշի,- հարցնում է էշը: -Օ՛Ֆ,- պատասխանում է շունը,- պառավել եմ, օր օրի ավելի եմ թուլանում, էլ չեմ կարողանում որսի գնալ, դրա համար էլ տերս որոշել է սպանել ինձ, բայց ես փախել եմ: Հիմա ո՞նց եմ մի կտոր հաց վաստակելու:

- Գիտես ինչ,- ասում է էշը,- ես գնում եմ Բրենեն, ուզում եմ թափառաշրջիկ երաժիշտ դառնալ, դու էլ արի, երաժիշտ կդառնաս: Ես վին եմ նվագում, դու էլ թմբուկ կգարկես: Շունը հաճույքով համաձայնում է, ու վեր են կենում միասին գնում: Գնում են, գնում, մեկ էլ հանդիպում են մի կատվի, որ տխուր նստել է ճամփեզրին, ամպի պես սևակնել: - Հը՞, փիտ Խաթուն, ինչո՞ւ ես տխուր, վատ բա՞ն է պատահել, հարցնում էշը: - Ինչպես չտխրեմ, երբ վերջս եկել է,- պատասխանում է կատուն,- պառավել եմ, ատամներս թափվել են, ժամանակն է, որ նստեմ վառարանին ու մոռամ, ոչ թե մուկ բռնեմ: Տիրուհիս ուզում էր ինձ ջուրը գցի, խեղդի, բայց ես փախա: Ի՞նչ խորհուրդ կտաս, ո՞ր գնամ, ինչպե՞ս ապրեմ: -Մեզ հետ արի Բրենեն, դու գիշերային համերգներ տալու վարպետ ես, թափառաշրջիկ երաժիշտ կդառնաս: Կատվին դուր է գալիս առաջարկությունը, միասին ճանապարհ են ընկնում: Մեր փախստականները, երբ անցնելիս են լինում մի բակի մոտով, տեսնում են դարպասի գլխին մի արլոր է նստած ու կոկորդով մեկ ծուղրուղու է կանչում: - Ինչո՞ւ ես կոկորդ պատռում,- հարցնում է էշը:- Ի՞նչ է պատահել: - Լավ եղանակ է լինելու,- պատասխանում է արլորը:- Էսօր աստվածածնի օրն է. նա լվացել է փոքրիկ Քրիստոսի շապիկը, ուզում է չորացնի:

Միևնույն է, տիրուհիս խիղճ չունի. վաղը կիրակի է, առավոտյան հյուրեր են գալու, խոհարարուհուն պատվիրել են ապուր եփել, էսօր երեկոյան գլուխս կտրելու են: Դրա համար էլ քանի դեռ կարող եմ, կանչում եմ: - Ահա թե ինչ, աքլորիկ, կարմիր-կատարիկ, արի մեզ հետ, Բրեմեն ենք գնում: Միևնույն է, մահից ավելի վատ բան չկա, դու լավ ձայն ունես, եթե միանաս մեզ, գործներս հաջող կգնա: Աքլորին դուր է գալիս առաջարկը, ու նրանք չորսով ճանապարհ են ընկնում: Բայց էդ օրը Բրեմեն չեն հասնում, երեկոյան մտնում են անտառ ու որոշում գիշերը մնալ էդտեղ: Էշն ու շունը պառկում են մեծ ծառի տակ, իսկ կատուն ու աքլորը նստում են ճյուղին: Աքլորը թառում է ծառի բարձր կատարին, որտեղ իր համար շատ ավելի ապահով է: Քնելուց առաջ նայում է շուրջն ու նրան թվում է, թե հեռվում լույս է երևում, ձայն է տալիս, թե մոտերքում տուն կա, լույսը երևում է: - Պետք է գնալ էդ տուն, էստեղ ապահով չի: Իսկ շունը մտածում է, որ մի քանի կտոր ոսկորն ու միսը չէր խանգարի իրեն, և վեր են կենում ու գնում դեպի լույսը: Շուտով նկատում են, որ լույսը գնալով պայծառանում է ու մեծանում: Երբ տեղ են հասնում, պարզվում է, որ դա ավազակների որջն է: Էշը, որ մեջների ամենաբարձրահասակն էր, մոտենում է պատուհանին ու ներս նայում: - Հը՞, էշ ի՞նչ ես տեսնում,-հարցնում է աքլորը: - Տեսնում եմ՝ ճոխ սեղան է բացված, համեղ-համեղ ուտելիքներ ու խմիչքներ են դրված, ավազակներն էլ սեղանի շուրջը նստած՝ վայելում են: - Երևի մեզ համար էլ մի բան կճարվի,- ասում է աքլորը: - Այո, իհարկե, միայն թե կարողանանք էնտեղ ընկնել,- ասում է էշը: Ու գազանները նստած՝ տալիս են առնում, թե ինչպես անեն, որ ավազակներին փախցնեն: Վերջապես հնարը գտնում են: Որոշում են՝ էշը առջևի ոտքերը դնի պատուհանին, շունը բարձրանա նրա վրա, կատուն՝ շան վրա, իսկ աքլորը թող թռչի ու նստի կատվի գլխին: Էդպես էլ անում են: Պայմանական նշանը տալուն պես սկսում են աղմուկը. էշը խոնչում է, շունը՝ հաչում, կատուն՝ մլավում, իսկ աքլորը՝ երգում, ծուղրուղու կանչում: Հետո պատուհանից էնպես են ներս խուժում, որ ապակիները գնգգնգում են: Մոսկալի ձայնից վախեցած ավազակները վեր են թռչում տեղներից՝ կարծելով, թե ուրվական է հայտնվել, սարսափահար փախչում են անտառ: Էդ ժամանակ մեր չորս ընկերներն առոք-փառոք սեղան են նստում, ամեն մեկն ընտրում է իր սրտի ուզածը, սկսում քեֆ անել: Կուշտ ուտելուց հետո չորս երաժիշտները հանգցնում են լույսը, և ամեն մեկն իրեն հարմար գիշերելու տեղ է ընտրում: Էշը պառկում է գոմաղբի կույտի վրա, շունը՝ դռան ետևում, կատուն՝ վառարանի մոխրի մոտ, իսկ աքլորը՝ թառին ու, քանի որ երկար ճանապարհից հոգնած են լինում, անմիջապես քնում են: Երբ կեսգիշերն անց է կենում, ավազակները հեռվից նկատում են, որ տանն այլևս լույս չի վառվում, կարծես թե ամեն ինչ խաղաղ է, սիրտ են առնում: Ավազակապետն ասում է. Վախենալու բան չկա,- և իր մարդկանցից մեկին ուղարկում՝ տեսնի ինչն ինչոց է: Մա տեսնում է՝ ամեն ինչ խաղաղահանգիստ է, մտնում է խոհանոց, որպեսզի լույսը վառի: Երան թվում է, թե կատվի շողշողուն աչքերը այրվող ածուխներ են, կրակխառնիչը մոտեցնում է, որ խառնի ու վառի կրակը: Բայց կատուն կատակներ չի սիրում, թռչում է ուղիղ ավազակի երեսին, փշշացնում ու ճանկոտոտում: Ավազակը վախենում է, ուզում է փախչել ետնամուտքից, շունն էլ հենց էդ դռան ետևն է լինում

պատկած, վեր է թռչում, կծում նրա ոտքը: Ավագակը վագ է տալիս բակի միջով, գոմաղբի կույտի մոտով անցնելիս էշը քացի է տալիս. արլորն էլ աղմուկից արթնանում է ու թառից ուժգին ծուղրուղու կանչում: Ավագակը գլխապատառ վագում է ընկերների մոտ, ասում. - Օ՛, տանը մի սարսափելի վիուկ կար, էնպես փչեց երեսիս, ճանկոտեց իր երկար մագիլներով, քիչ մնաց ուշքս գնար, իսկ դռան մոտ դանակը ձեռքին մի մարդ էր կանգնած, անցնելիս կտրեց ոտքս, բակում էլ մի սև հրեշ կար, մահակով էնպես խփեց, որ շշմեցի, իսկ տանիքի գլխին, դատավորը նստած՝ գոռում էր. «Էստեղ բերեք գողին»: Հագիվ կարողացա փախչել: Էդ օրվանից հետո ավագակները վախենում են ու այլևս չեն վերադառնում, իսկ Բրենենի չորս երաժիշտներին տունն էնքան է դուր գալիս, որ էլ չեն ուզում հեռանալ: Էս հեքիաթը ամենավերջին պատմողը ամեն ինչ իր աչքով է տեսել:

# About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](http://wikisource.org)<sup>[1]</sup>. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](http://creativecommons.org/licenses/by-sa/3.0)<sup>[2]</sup> license or, at your choice, those of the [GNU FDL](http://www.gnu.org/copyleft/fdl.html)<sup>[3]</sup>.

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)<sup>[4]</sup>.

The following users contributed to this book:

- Chaojoker
- 46.130.26.66
- 46.70.208.184

- 
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
  2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
  3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
  4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)